

Տարեց մարդկանց COVID-19 աջակցության գիծ

Տարեց մարդկանց COVID-19 աջակցության գիծը տեղեկացնում, աջակցում և միացնում է տարեց ավստրալացիներին:

Որոշ տարեց մարդիկ խոցելի են COVID-19-ի նկատմամբ, բայց առավել քիչ կապված են համացանցին, և իրենց հանգամանքների համար տեղեկատվության հասանելիության ձևերի կարիք ունեն:

Տարեց ավստրալացիները, նրանց ընտանիքները, ընկերները և խնամողները կարող են անվճար զանգահարել (FREECALL) 1800 171 866 հեռախոսահամարով, եթե նրանք.

- կցանկանան գրուցել որևէ մեկի հետ COVID-19-ի սահմանափակումների և իրենց վրա դրանց ազդեցության մասին
- միայնակ են զգում կամ մտահոգված են իրենց սիրելիների համար
- հոգ են տանում որևէ մեկի համար և որոշ տեղեկատվության կամ որևէ մեկի հետ գրուցելու կարիք ունեն
- օգնության կամ խորհրդի կարիք ունեն իրենց ստացած տարիքային խնամքի ծառայությունների փոփոխության մասին
- օգնության կարիք ունեն խնամքի նոր ծառայություններ կամ անհրաժեշտ պաշարեղեն ձեռք բերելու համար, ինչպիսիք են՝ զնումները
- մտահոգություն ունեն իրենց, ընկերոջ կամ ընտանիքի անդամի համար, ովքեր ունեն սկարամտություն
- կցանկանային կազմակերպել մեկանգամյա կամ կանոնավոր բարեկեցության ստուգումներ իրենց կամ որևէ մեկ այլ անձի համար:

Տարեց ավստրալացիները, նրանց հարազատները, խնամողները, ընկերները և աջակցողները կարող են.

- զանգահարել **1800 171 866**
- առավոտյան ժամը 8.30-ից մինչև երեկոյան ժամը 6-ը AEST աշխատանքային օրերին
- ցանկացած տեղեկատվության կամ ծառայությունների համար, որոնք նրանց կարող է անհաժեշտ լինեն:

Տարեց մարդկանց COVID-19 աջակցության գիծը համատեղ նախաձեռնություն է.

- COTA Ավստրալիա (COTA Australia)
- Dementia Ավստրալիա (Dementia Australia)
- Ազգային Տարեցներ (National Seniors) և
- OPAN,
- օժանդակվում է Ավստրալիայի կառավարության դրամական միջոցներով:

Թարգմանչական ծառայության (TIS) աջակցություն

Տարեց ավստրալացիները, ովքեր անգլերեն չեն խոսում, կարող են.

- զանգահարել TIS National 131 450 հեռախոսահամարով,

- պահանջել թարգմանիչ, և
- խնդրել միացնել Տարեց ավստրալացիների COVID-19 աջակցության գիծ կամ տրամադրել 1800 171 866 հեռախոսահամարը՝ միանալու համար: